



ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE
ОБЩЕСТВЕННЫЙ ЦЕНТР ЭКОЛОГИЧЕСКОЙ ИНФОРМАЦИИ

Հեռ.՝ (+37410) 551364;

Email: info@aarhus.am

Հասցե՝ Չափենց 46

ՌԵՕԿ_14/08

30_04_2014

Երևանի քաղաքապետ պարոն
Տարոն Մարգարյանին

Հարգելի պարոն Մարգարյան

Մեր կենտրոնի ունեցած տեղեկություններով Հաղթանակի զբոսայգում՝ «Գոլդեն Փելլա» հյուրանոցի անմիջական հարևանությամբ ներկայումս ընթանում են շինարարական աշխատանքներ, որի արդյունքում հատվել են նաև ծառեր.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները, կարևորելով հասարակության տեղեկացվածության աստիճանի բարձրացման անհրաժեշտությունը, խնդրում եմ Երևանի Օրհուս կենտրոնին տրամադրել վերոնշյալ տարածքում իրականացվող շինարարության համար հիմք հանդիսացող հետևյալ փաստաթղթերի պատճենները.

- Ճարտարապետահատակագծային առաջադրանքի, քաղաքաշինական փորձաքննության եզրակացության և շինարարության թույլտվության պատճենները:
- Իրականում հատվել են արդյո՞ք ծառեր նշված շինարարության հետևանքով, եթե այո՝ ապա ի՞նչ քանակի և ի՞նչ ծառատեսակներ են դրանք, խնդրում եմ տրամադրել նաև հատման թույլտվության պատճենները:

Ակնկալում եմ հայցվող տեղեկատվությունը ստանալ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված ժամկետում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին:

Կանխավ շնորհակալություն

Երևանի Օրհուս կենտրոնի
համակարգող

Ս. Այվազյան